

Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԿՏԱՎԱԾ

ԵՎՐՈՊԱ

ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

В СЫМЕН



ՀԱՅՊԵՏՐԻԱՆ

633.591

U-99

5019

Անդրադաս, 16.

Կոմիտասի տիւ համ Հայոց
Պանակ:

1m. 954

633.591
V-99

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԱՇԽԱՏՎԱՐ Հ 1961 թ.

Կ Տ Ա Վ Հ Ա Տ Ը Ը

ԵՎ ՆՐԱ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

6105

A 18526



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԵՐԵՎԱՆ 1943

А. МУРАДЯН
Лен и его обработка
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1943

ԿԾԱՎՀԱՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐ

«...Անհամեծ է... որ մեր կոլխոզնիկները, տղամարդիկ ու կանայք, իրենց դաշտում աշխատեն առանց ձեռները ծալիբու և ռազմանակատին ու եկրին տան ավելի ու ավելի շատ հաց, միս, հումք...»
Կ. Ս Ա Լ Ի Ւ

Կտառվհատի կուլտուրան դեռ շատ վաղ ժամանակներից հայտնի է մարդուն. դրա համար էլ շատ գիտնականներ զբաղվել են այդ կուլտուրայի ծառաման խնդրով: Շվեյցարական բուսանիկ կոնոնդովը և ակադեմիկ Կոմարովը հնարավոր են համարում, «որ մարդը հացահատիկների հետ միասին մոտավորապես 5000 տարի մեր տարեթվից առաջ սկսել է այդ կուլտուրան առաջին անգամ մշակել հարավ-արևմտյան Եվրոպայում, Միջերկրական ծովի ափերին, որտեղից Եղիսաբետի վրայով այն տարածվել է ամբողջ աշխարհում»:

Երկրորդ հնֆալքությունն այն է, որ նրա հայրենիքը Միջազգային է, Պարսից ծոցի, Կասպյան և Սև ծովերի միջև ընկած տարածությունները:

Պրոֆ. Ա. Ճառյանը կտավ-քետեն բառի ծագումը լուսաբանելիս և Արթինյանը՝ մի չարք պատմական տվյալների հետան վրա (Հայկական հին պատմագրեր, Միիթար Գոշի առակներ և այլն) հավանական են դանում, որ կտավհատի հնագույն Հայրենիքը Հայաստանն է եղել: Դեռ շատ հին ժամանակներում Հայաստանում մշակվող կտավհատի թելից պատրաստել են զանազան հաղուստներ—մանվածքներ և դրանցով ապրանքափխանակություն կատարել արևելքի հին ժողովուրդների հետ: Այդ նույն դիտականների կարծիքով, Հայաստանից այդ կուլտու-

բան անցել է սեմիտական ժողովուրդներին և նրանց միջոցով տարածվել ամբողջ աշխարհում :

Կտավհատը շատ արժեքավոր թելատու և յուզատու բույս է : Նրա թելից պատրաստում են բաղմապիսի գործվածքներ (քաթան, կտավ, հագուստի, սփոսցի, սրբիչ, սալանի և կահկարասիների կտորներ, ժանյակ, բատիստ և այլն), նաև տեխնիկական կարեֆների համար կտորներ՝ պարուսին, բրելենս, պարկերի կտորներ, անջրանցիկ կտորներ, հատուկ գործվածքներ և այլն : Կտավհատը միաժամանակ պաշտպանական նշանակություն ունեցող բույս է : Նրա թելն օգտագործվում է ավիացիայի, պարագաներին, պատոմոբիլային և այլ արդյունաբերություններում, ինչպես նաև բանակի զգեստավորման և սարքավորման համար :

Կտավհատի սերմերից ստացվող յուղը նույնպես լայն չափով օգտագործվում է ինչպես սննդի, այնպես էլ անիմնիկական կարեքների համար : Այդ յուղից պատրաստվում է օլիֆ, լոք, յուզանիներին, օճառ և այլն : Կտավհատի քուսպը և հարդը արժեքավոր անառնակներ են համեմիսանում : Վերջադրեն, կտավհատի սերմերն օգտագործվում են նաև բժշկության ասպարեզում :

Կտավհատի այսպիսի բազմազմանի օգտագործումը, մանավանդ ուղղական դործի մեջ, պարտավորեցնում է մեզ առանձնապես մեծ ուշադրություն զարձնել այս կուտարայի մշակության վրա և երկրին տալ հավելյալ տոններով կտավհատի արտադրանք :

ԿՏԱՎՀԱՏՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

Կտավհատի համաշխարհային ցանքերի տարածությունը 1937 թվին հաշվվում էր 7,13 միլիոն հեկտար : Յարական Ծուռաստանում 1913 թ. մշակվում էր 1,02 միլիոն հեկտար կտավհատ, իսկ ՍՍՌ-ում այդ տարածությունը լայնացվեց ավելի քան 2 անդամ (1937 թ. ՍՍՌ-ում մշակվում էր 2,738 միլիոն հեկտար) : Կտավհատի առաջնային երկրների հետ համեմատած՝ թե՛ ցանքերի տարածության և թե՛ արտադրանքի տեսակետից ՍՍՌ-ը բռնում է առաջին տեղը : Ինչպես ժողովրդական անտեսության բոլոր բնագավառներում, այնպես էլ կտավհատի արտադրանքի ասովարեզում ՍՍՌ-ը անձանաչելի է դառել :

Պրեմիսլով արորով զինված 4,8 միլիոն անհատական տնտեսությունների փոխարեն այժմ կան 90 հազար կտավչառացան կոլխոզներ, որոնց համար աշխատում է 1000-ի չափ ՄՏԿ, ամենանըրագույն տեխնիկայով զինված կոտավչառի 500 դորձարան և ուրիշ շատ բարե մեջնաներ, որոնք խոչոր չափով նպաստել են նպաստում են բերքատվության բարձրացմանը:

Կտավչառի բերքատվության բարձրացման դորձում առաջնակարգ դեր են կատարել ստախանովականները, որոնց օբյեններն հետեւմ է կոլխոզների ամբողջ աշխատավորությունը: Այդպիսի մարդկանց թվին են պատկանում Ռեկրաֆինայի Ժիտոմիրի մարզի Թիվմանի անվան կոլխոզի օգակավար, կոտավչառացան մեծ վարպետ Յ. Ա. Բարանովսկայան, որը 1938 թվին հեկտարից տվեց 21,75 ցենտներ կտավչառի բավորակ թել, նույն մարզի՝ Ստալինի անվան կոլխոզից չքանչանակիր կոլխոզնիկ Գ. Ի. Դեղկովսկին, որը նույն թվին հեկտարից տվեց 23,16 ցենտներ բավորակ թել և 14,2 ցենտներ սերմ, Բելոսուսկայի Մարիլյովի մարզի «Զավիտի թիվչա» կոլխոզի օգակավար ընկ. Գոնակովան, որը 1938 թ. հեկտարից հանձնեց 10,35 ցենտներ բավորակ թել և 9,06 ցենտներ սերմ և այլն: Այժմ Փաշխտական բարերարուները ժամանակավորագույն օկուպացիոնի են Ենթարկել այդ տերիտորիայի մի մասը, բայց նրանք արգեն սկսել են Կարմիր Բանակի հարկածների տակ գլորվել դեպի արեմուտք և հեռու չե այն օրը, երբ մեր տղատաղրված կոլխոզային դաշտերում նորից կտավի կոլխոզնիկների ստեղծագործ հուժկու երգը:

Կտավչառի կուլտուրայի զարգացման ասպարեզում ստեղծագործ մեծ աշխատանք կատարեց սովորական դիտական միտքը: Այս վերջին մի քանի տարիների ընթացքում տեղական վասուրակ սորտերը փախարինվեցին սելեկցիոն բարձրորակ սորտերով (ինչպես օրինակ «Պակովի լավացրած» № 1288/12 և այլ սորտեր), որոնք 30 և ավելի տոկոս թելի ել են տալիս: Մեծահատիկ սերմեր ունեցող յուղատու միջերկրական սորտերի և տեղական յուղատու կամ Աղբբեկչանի փոփող կտավչատների միջսորտային տրամախաչման միջոցով այժմ սոտացվել են նոր, բարձր յուղատու սորտեր: Այդ աշխատանքին մեծ եռանգով լծվեցին մեր առաջազոր կոլխոզնիկները և մեծ նվաճումներ ձեռք բերին: Օրինակ կարող է ծառայել Գորկու մարզի կոլխոզնիկ Ս. Ն. Բարիչելը, որն ստացել է մինչև —7 աստիճան ցլուի գիմացող սորտ:

Համամիութենական ԺԿՍ-ի և Համ Կ(բ)Պ Կենտկոմի 1938 թվի մարտի 22-ի որոշումը կտավհատի կոնտրալիտացիայի մասին, ՍՍՌՄ ԺԿՍ 1938 թվի ապրիլի 3-ի որոշումը՝ կտավհատի բերքատվության բարձրացման մասին, ինչպես նաև Հայկական ՍՍՌ ԺԿՍ-ի և ՀԿ(բ)Պ Կենտկոմի 1941 թվի դեկտեմբերի 24-ի որոշումը՝ հանդիսացան սոցիալիստական կտավհատագործության ծաղկման ու զարգացման մի նոր զարգացման:

Վերոհիշյալ որոշումների անշեղորեն կիրառումն ավելի ևս կբարձրացնի այս արժեքավոր կուլտուրայի տեսակարար հզիսը և բերքատվությունը, զարձնելով այդ կուլտուրան մեր կոլլագների համար բարձր եկամտի մի նոր ազգյուր:

ԿՏԱՎՀԱՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Հողա-Լիիմայական պայմանները լայն հասրավորություն են ստեղծում մշակելու կտավհատի զանազան տեսակներ: Զնայած զրան, առայժմ մեզ մոտ տարածված է միայն յուղատու կտավհատի մշակությունը: Շատ քիչ քանակությամբ կարմիրի սայրում մշակվում է նաև «Մեժեսմոկ» տեսակի կտավհատը: Ընդհանրապես այս կուլտուրայի տարածման արեալը կարելի է հաշվել 950 մետրից մինչև 2000 մ. ծովի մակերեսութիւնը բարձր, այսինքն մեր նախալեռնային շրջաններից սկսած ու վերջացրած բարձր լեռնային շրջաններու: Հիմնական կտավհատացման շրջաններ հանդիսանում են՝ Ղուկասյանը, Ամասիան, Աղբնը, Արթեկը, Սիսիանը և մի քանի այլ շրջաններ:

Սովորական Հայաստանում տարեց-տարի ավելանում է կտավհատի ցանքերի տարածությունը, ըստ որում, բամբակից հետո, տեխնիկական կուլտուրաների մեջ կտավհատը գրավում է առաջին տեղը (աղյուսակ № 1):

Աղյուսակ № 1

ԿՏԱՎՀԱՏԻ ՑԱՆՔԵՐԻ ԴՐԱՄԻԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ

Տարեթիվ	Տարածությունը հեկտարով
1939	7601
1940	9416
1941	10,000

Ինչպես ՍՍՌՄ-ի այլ շրջաններում, այսպես էլ մեզ մոտ կան բավական բարձր բերք ստացող կոլլողներ և կոլլագնիկ-

Ներ: Օրինակ՝ Սիսիանի շրջանի Բորիսովկա գյուղի «Ավանդաբազ» կոլխոզը (Նախագահ Սամվել Խաչատրյանի Ավետիքյան) 28 հեկտար տարածությունից ստացել է 224 ցենտներ (հեկտարից 8 ցենտներ)։ Հաստիկ: Այդ նույն կոլխոզի բրիգադը, որի բրիգադիրն է Կարսալետ Ռոկանի Շասիմիսյանը 8 հեկտար տարածությունից ստացել է 92,52 ցենտ. բերք (հեկտարից 11,56 ցենտներ): Շաղատ գյուղի «Կարմիր Հոկտեմբեր» կոլխոզը (Նախագահ Հովհաննես Անդրիասի Հովհաննիսյան) 50 հեկտար տարածությունից ստացել է 400 ցենտ. բերք (հեկտարից 8 ցենտներ), իսկ այդ նույն կոլխոզի առաջավոր բրիգադը, որի բրիգադիրն է Վաղարշակ Հարությունի Հարությունյանը 5 հեկտարից ստացել է 60,2 ցենտներ բերք, որը կազմում է հեկտարից 12,04 ցենտներ: Կոտայքի շրջանի Ողջաբերդ գյուղի Լենինի անվան կոլխոզի բրիգադիր Հովհաննես Կարսալետի Մուրադյանը 5 հեկտարից ստացել է 35,1 ցենտ. (հեկտարից՝ 7,2 ցենտներ): Կարելի է թվել ուրիշ շատ կոլխոզների, որոնք այս ասպարեզում մեծ նվաճումներ են ձեռք բերել:

ՀՍՍՌ Դաշտավարական կայանի Լենինականի փորձարարչությունույնական մի շարք տարիների ընթացքում հեկտարից ստացել է 14—16 ցենտներ հատիկի բերք:


Զնայած զբան, Հայաստանի կտավհատացան շրջանների կոլխոզների մեծ մասում այլ կուլտուրան համարյա աչքաթող է արված:

Արձանագրված են մի շարք գեպքեր, երբ կտավհատի ցանքը կատարվել է վատորակ սերմերով, վատ նախորդներից հետո, մոլախոտերով վարակված ու միայն դարձնանը հերկած հողում: Թերապնահատիվել է նաև պարարտացման գերը: Բացի դրանից, ցանքը կատարվել է մեծ ուշացումներով և շաղացան, սերմերը թաղվել են մինչև 5—6 սմ. և ավելի խորությամբ, որի հետեւ վաճքով նրանց 50—60%-ը բոլորովին չի ծլել կամ ուշ է ծլել և ստացվել է նորացած ցանք: Լավ հիմքերի վրա դրված չի եղել նաև ցանքերի խնամքը՝ քաղցանը, սնուցումը, ուսուցումը և այլն: Այս բոլորի հետեւանքով կտավհատի միջին բերքատվությունը մեզ մոտ խթան ցածր է եղել, որ բոլորովին անհանդուրժելի է: Եղած սեղերվների լրիվ օգտագործման դեպքում և լավուակ խնամքի միջջոցով մենք կարող ենք ամենակարճ ժամանակամիջինոցում կտավհատի բերքատվությունը բարձրացնել և իրա-

գործել ընկ. Մոլոտովի այն ցուցմունքը, որ նա տվել է 1938 թվին կոլխոզներին և հողային աշխատողներին. «ԿտավՀատի արտադրության մեջ մենք խիստ հետ ենք մնացել... Բոլչեիկան պարտիան և մեր ամբողջ ժողովուրդը հողային աշխատողներից պահանջում են միայն մի բան. շարժման մեջ դնել այն անդերիները, որոնք դանվում են մեր գյուղատնտեսության մեջ»:

ԿՏԱՎՀԱՏԻ ԲՈՒԽԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ. ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՌԱԽՆՎԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿտավՀատն ունի մոտ 100 տեսակ, սակայն դրանցից միայն մի փոքր մասն է մշակվում, իսկ մնացածը վայրի և մեծ մասմբ բարձամյա բռւյանը են (նկար 1):



ԿտավՀատի կուլտուրական տեսակները.
I—II թեղատու, III մեժենումոկ, IV յուղատու

Կուլտուրական կտավՀատի տեսակները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ մանր սերմավոր և մեծ սերմավոր: Առաջին խմբի սերմերն ունեն մոտ 3,5—4,8 մմ. Երկարություն, իսկ երկրորդինը՝ 5—6,3 մմ.:

Մանր սերմալոր կտավհատը մեղ մոտ ավելի շատ է տարած-
ված : Այս խումբը բաժանվում է հետեւյալ չորս ևնթափմբերի :

1. Թելատու (Դոլգունեց)
2. Յուղատու, դանդրավուշ (Կուղբյաշ)
3. Միջանկյալ (Մեժեռումոկ)
4. Փովոզ :

Թելատու (Դոլգունեց) կտավհատը մշակվում է դլխավորա-
պես թել ստանալու համար :

Սրա ցողունը, համեմատած կտավհատների մյուս խմբերի
ցողունի հետ, լինում է երկար, բարակ և քիչ ճյուղավորվող :
Սովորաբար ցողունի միայն ծայրամասը թույլ ճյուղավորվում
է, իսկա ցանքի պայմաններում հաճախ բոլորովին չի ճյուղա-
վորվում և տալիս է մեկ սերմատուփ (պտուղ) :

Յուղատու (Կուղբյաշ) խմբին պատկանող բույսերի ցո-
ղունները, թելատուների հետ համեմատած, կարճ և առատ
ճյուղավորվող : Ճյուղավորությունն սկսվում է ցողունի ստորին
մասից : Առատ ծաղկում է և տալիս է մեծ քանակությամբ սեր-
մատուփեր :

Միջանկյալ կտավհատն իր հաստիանիչներով գրավում է դու-
գունեցի և կուգրյաշի միջին տեղը, այսինքն ցողունը դոլգունե-
ցի ցողունից ավելի կարճ է, իսկ կուգրյաշից՝ ավելի երկար,
ճյուղավորությունը և պտղակալումը դոլգունեցից ավելի շատ
է, իսկ կուգրյաշից՝ քիչ : Մշակվում է դլխավորապես սերմի
համար, իսկ երբեմն՝ նաև թել ստանալու նպատակով :

Փովոզ կտավհատները շատ քիչ են տարածված : Բավակա-
նաչափ առաստ պտղակալում են : Պատահում են Աղրբեջանում,
որպես աշնանացաններ :

Մեծ սերմանի կտավհատները բաժանվում են երկու խմբի՝
միջերկրական և ոռուսական մեծ սերմանի կտավհատների : Այս
կտավհատները սովորաբար մշակվում են սերմի համար : Արանք
մեղ մոտ քիչ են տարածված, համեմատաբար մեծ առածու-
թյուններով մշակվում են իսպանիայում, Իտալիայում, Եգիպ-
տոսում և մի շարք այլ երկրներում :


Կտավհատն ունի մանր, նշտարածե, անկոթուն տերեփներ,
որոնք ցողունի վրա դասավորված են պտղութակածե հերթակա-
նությամբ :

Ցողունի երկարությունը, բնչպես առվել է, տարբեր տեօակ-
ների մոտ տարբեր է : Դոլգունեցի ցողունի երկարությունը հաս-

նում է 100 սմ. և ավելի: Թելատուների ցողունը որքան երկար և քիչ ձյուղավորված լինի, այնքան լավ, որովհետեւ երկար և չճրողավորված ցողուններից երկար թել ավելի շատ է ստացվում: Նշանակություն ունի նաև ցողունի հաստությունը. բարակ ցողունների թելի ելք, տոկսոներով արտահայտած, ավելի մեծ է, քան հաստ ցողուններինը: Դորզունեցի ցողունը պեսաք է ունենա 1—2 մմ-ից ոչ ավելի հաստություն և առնվազն 75 սմ. երկարություն:

Կտավհատի ծաղիկները կենտրոնացած են բույսի ծայրամասում (ցողունի և ձյուղերի ծայրերին): Ծաղիկների պատկաներթիկները լինում են երկնադույն, մանիչշակագույն, սպիտակ և այլն: Մեզ մոտ տարածված կտավհատների ծաղիկները մեծ մասմբ մանիչշակագույն են:

Կտավհատի սերմատուփերը (պտուզները) մանր և կլոր են, ունեն հինգական բուն: Յուրաքանչյուր բուն բարակ թաղանթով բաժանված է երկու մասի: Բների ամեն մի մասում մեկ սերմ է լինում, ուստի տուփը պարունակում է 10 սերմ, բայց պատահում է նաև ավելի քիչ:



Սերմերը պարունակում են $35-40\%$ յուղ և մոտ 23% սպիտակիությալին նյութեր: Կուղբյաշի սերմերը գոլցունեցի սերմերից ավելի մեծ են և ավելի շատ յուղ են պարունակում ($մինչև 39-44\%$):

Կտավհատի արմատներն իլիկածն են, սովորաբար թույլ են զարգանալում, կուղբյաշի արմատները քիչ ավելի խորն են թափանցում, քանի գոլցունեցինը:

Կտավհատի ցողունների մի քանի շերտ հյուսվածքներ (նկար 2).

Յողունի արտաքին չերտը կազմված է մեկ շաբթ րջիներից (մաշկից), որնց արտաքին մասը պատաժ է մոմանման նյութի չերտով (կուտիկուլա): Մաշկի տակ անմիջապես ընկած է բույսի կեղեղը, որի մեջ տեղափորված են լուրային խրձիները: Այսուհետեւ զալիս են փայտանյութը և միջուկը: Թհլը կազմված է իլիկածն րջիներից, որնք լինում են 20—40 միլիմետր երկարությամբ և 0,02—0,08 մմ. Հաստությամբ: Այդ թելիկներն իրար չեն 10—30 հասով միանում են և կազմում գիրձիկներ: Խրձիների և թելիկների իրար միացնող նյութը կոչվում է պեկտին: Կեղեն և փայտանյութի մեջ ընկած է կամրխնի չերտը, որի րջիները զարդանալով, մի կողմից առաջացնում են փայտանյութ, մյուս կողմից՝ կեղեն:

ԿՏԱՎ.ՀԱ.ՏԻ ՄՇԱԿՄԱՆ ՀՈՂԱ-ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պահանջը դեպի հողը: Կտավհան ունի յուրահասունկ արմատային սիստեմ: Նրա զյանափոր արմատն ունենում է մինչև 1.5 մետր երկարություն, բայց չափ թույլ է ձյուղավորվում, ճյուղերը նուրբ են և հողից գժվարությամբ լուծվող սննդանյութերը յուրացնելու քիչ ընդունակ: Այդ իսկ պատճառով կտավհամին պետք է հառկացնել լավ ստրուկտուրա ունեցող, մատչելի սննդանյութերով հարուստ և բերբի հողեր: Փոչեացած հողերը ցանքից հետո նստում, պնդանում և խիստ կեղեակալում են, այլպիսով ոչ միայն գժվարանում է օդի մուտքը դեպի արմատները, այլ նաև հողի նման վիճակը ձևաչում է կտավհատի թույլ ծիրերը և կասեցնում նրանց զարգացումը: Այդ պատճառով կտավհատի մակության համար հարմար չեն փառ ստրուկտուրա ունեցող ծանր կավաչողերը, անպետք են նաև ավազային, թթուտորֆային, չափ կիրառական և բարձր ստորերկրյաց ջրեր ունեցող հողերը:

Զրի պահանջը: Կտավհատը բավական ջրասեր բույս է: Մի միավոր չոր նյութ պատրաստելու համար կտավհատը հողից վերցնում է 400—450 միավոր ջուր: Զնայած դրան, կտավհատը չի սիրում չափ խնայի հողեր: Այդ պատճառով որուղ ստորերկրյաց ջրեր ստացվում:

Ջերմության և լույսի պահանջը: Այս գործոնների նկատմամբ յուղասու և թելաժու կտավհատների պահանջը շատ մեծ չափով տարբերվում է:

Յուղատու կտավհատը պահանջում է ավելի տաք ու լուսա-
տառ պայմաններ, քան թե թելատու կտավհատը։ Այդպիսի
պայմաններում յուղատուն լավ ճյուղավորվում և առատ սերմ է
տալիս։

Թելատու կտավհատը լավ արդյունք է տալիս մեղմ, համե-
մատարար խոնավ, որոշ չափով մասամբլապատ պայմաններում։
Թելատու կտավհատը տաք և շատ առատ լույսի պայմաններում
նույնպես ուժեղ ճյուղավորվում է, որի հետևանքով ցողունի
թելատու մասը կարծ է լինում։ Նման լույսերից ստացվում է
քիչ և կոպիտ թել։ Թելատուն խիստ է ցանգվում հենց նրա հա-
մար, որպեսզի համեմատարար ավելի մեղմ պայմաններ ստեղծ-
վեն, և բույսերի աճը սեղի ունենա ոչ առատ լույսի պայման-
ներում։

Կտավհատի ծիլերը կարող են գիմանալ մինչև—3—4 առող-
ձան-կարճատև ցրտերի, իսկ ասանձին սորտեր կարողանում են
գիմանալ ավելի ուժեղ ցրտերի ($-5-7^{\circ}$)։

Սննդաբիյութերի պահանջը։ Կտավհատը սննդանյութերի
նկատմամբ համեմատարար մեծ պահանջներ չունի, նա հողից
համեմատարար քիչ քանակությամբ հանքային նյութեր է վերց-
նում։ Սակայն հողի հանքային նյութերը յուրացնելու տեսակե-
տից կտավհատի ընդունակությունները մեծ չեն, ուստի նա պա-
հանջում է հեշտ մատչելի սննդանյութեր (ազոտ, ֆոսֆոր, կա-
լիում և այլն)։

Կտավհատն սկզբի ըրջանում շատ գանդաղ է աճում, այնու-
հետեւ մինչեւ ծաղկման ըրջանն աճը խիստ արագանում է, իսկ
ծաղկման ըրջանի վերջից սկսած զանդաղում և համարյա կանգ
է առնում։ Այսպես է նաև սննդանյութերի պահանջը, որն սկզբ-
նական ըրջանում, երբ բույսը գենես փոքր է և շատ դանդաղ է
աճում, խիստ փոքր է, իսկ հետո, հատկապես կոկոնակալման
ըրջանից սկսած, հետզհետեւ մեծանում է։

Ծաղկման սկիզբը կտավհատի ամենակրիտիկական ըրջանն է,
ուստի հաջող արդյունք ստանալու համար այդ ըրջանում պետք
է լրիվ պահանջներ բույսի բոլոր անհրաժեշտ պահանջները։

Կոտավիատի տեղը ցանքաշրջանառության մեջ։ Կտավհատի
բիբրատվության բարձրացման գիմական լծակ պետք է համա-
րել խոտագաշտային ցանքաշրջանառության կիրառումը։ Փորձե-
րը ցույց են տալիս, որ կտավհատը բարձր բերք է տալիս, երբ
մշակվում է բազմամյա խոտարույսերից և այլ համապատաս-

իսան նախորդներից հետո և աշնանից իննամբուլ հերկած հողերում :

Կտավհատը կարելի է ցանել նաև շարքահերկ կուլտուրաներից, օրինակ, կարտոֆիլից, արեածաղկից հետո։ Միայն թե այդ կուլտուրաները նույնաեն պետք է չառ լավ իննամբեն, մանավանդ մոլախտերը ժամանակին պետք է ոչնչացվեն, որպեսզի զրանց հաջորդող կտավհատի ցանքերում մոլախտեր չլինեն։ Շարքահերկ կուլտուրաները պետք է նաև լավ սպարաբասցար մինեն, մանավանդ օրդանական սպարաբասնյութերով, առաջին հերթին գոմաղբով։

Կտավհատը կարելի է ցանել նաև աշնանացան հացահատիկներից հետո։ Այդ դեպքում նույնպես հողը պետք է չառ լավ սպարաբասցնել և մոլախտերից բոլորովին աղատել։ Կտավհատը երբեք չի կարելի ցանել կտավհատից հետո։ Առհասարակ կայուն և բարձր բերք ստանալու տեսակետից նույն հողամասում կտավհատ կարելի է մշակել 5—6 տարին մի անգամ միայն։ Կտավհատը չի կարելի ցանել նաև զարնանացան հացահատիկներից հետո, որովհետեւ այդ գաշտերը մոլախտերով ուժեղ վարակված են լինում, իսկ կտավհատը, ինչպես տաել ենք, մորթիստերից խիստ տուժում է։

Ենելով պետական պլաններից, կոլխոզի գարգարման հետանկարներից և հաշվի առնելով հոգակիմայական պայմանները, կոլխոզը կարող է ընդունել 7—8—9—10 դաշտյան խոռավոշտային ցանքաշրջանառություն։ Բոլոր գեղքերում ցանքակալի է կտավհատը մշակել բազմամյա խոռներից անմիջապես հետո։

Երբեք օրինատիր, մենք առաջարկում ենք 9 դաշտյան ցանքաշրջանառություն, կուլտուրաների հետեւյալ հաջորդականությունը՝

1. Ցել (ժաքուր կամ զբաղված)
2. Աշնանացան
3. Գարնանացան+խոռախառնություն
4. Խոռախառնություն
5. Խոռախառնություն
6. կտավհատ
7. Հացահատիկ
8. Շարքահերկ
9. Հացահատիկ

Յանքաշը անսուռթյան այս տիպը յուրաքանչյուր ռայանում և կոլորդում պետք է կազել պետական պլանային առաջադրանքների հետ և կատարել համապատասխան ճշտումներ :


Յանքաշը անսուռթյան այս սխեման բավական ունիվերսալ է : Այս մեծ չափով նպաստելու է հացահատիկների ընթրքի բարձրացմանը, որոնք ապահովված են բավարույն նախորդներով, հաջաղ կերպով լուծելու է անասնակերպի պահանջը, վերջապես, լավ տեղ են ստանարար նաև շարքահերթ կուրտուրաները : Խոր չի կարող լինել այն մասին, որ վերևում բերված ցանքաշը յանքաշը ուղղության կիրառման դեպքում միանդամայն առահովված կլինի նաև կտավհատի բարձր բերքատվությունը :

ՀՈՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Կտավհատին հատկացված հոգերը յուրահատուկ մշակություն են պահանջում : Այս կուրտուրան հիմնականում պետք է ցանովի բազմամյա խոտարայսերից հետո, կամ խոպան հողերում, այսինքն այնպիսի հողերում, ուր վերին շերտը ձիմակարծ է : Նմանօրինակ հողերի վարը հիմնականում պետք է լուծի հետեւյալ խողիքները . 1. երեսի ձիմը կարի և վարելաշերտի տակը զցի, 2. տակը զցած այդ ձիմը ծածկի հողով, այնպես, որ կենդանի բույսերը մեռնեն և մեկ կողմից լավացնեն հողի ստրուկտորան, մյուս կողմից մշակվող բույսերն ապահովեն սննդանյութերի անհրաժեշտ պաշարով :

Խոտարույսերից ազատված հողերի (նաև խամահողերի) վարի հարցի լուծումը տալիս է ակադեմիկ վ. Ռ. Վիլյամսն իր առաջարկած կուրտուրական հերկի սիստեմի միջոցով, որը պետք է կատարել նախագութանիկ ունեցող գութանով (նկ. 3) :

Նախագութանիկ ունեցող կուրտուրական գութանն ունենում է երկու կրտպու . մեծ կամ գլխավոր և փոքր կամ նախագութանիկ : Այս վերջինը բոլորային նման է ցիֆարոր զութանին, միայն առելի փոքր է, կարծես մեծի պատճենն է, և միացրած է զիլավոր գութանի առջեից : Վարը կատարվում է հետեւյալ կերպ . առջեից զնացող նախագութանիկը կարում է հողի վերին ձիմակարծ շերտը մոտ 10 սանտիմետր խորությամբ և զցում վարի ակտոսի հատուկը, իսկ նրա հետեւից եկադ զիլավոր կորպուսը կտրում և շուրջ է տալիս այդ ձիմի վրա հողի մի շերտ մոտ 10—15 ամ . խորությամբ, որի տակ լույսից զրկված ձիմն ստանձնարար մեռնում և վտառվ է : Այս ձեի վար պիտի կոր-



Նկ. 3. Նախադութանիկակոր գութան

տարել նաև այլ նախորդներից պատված Հողերում։ Մի շաբք դիտահետազոտական կայանների տվյալներով, միայն՝ կուրսուրական վարը նախադութանիկով տալիս է բերքի բարձրացում մինչև 46% (ըստ Բեմեցկու փորձապաշտի)։ Դժբախտարար մեղմուա այլպիսի հերկ շատ քիչ է կատարվում, իսկ կտավհատի համար համարյա բոլորովին չի կատարվում։ Իսկ այդ մասին կա ՍՍՌՄ-ի ժողկոմանիկով հետեւյալ որոշումը. «Ական 1939 թվից արգելել կտավհատի ցանքը զարնանավարի վրա, առաջարկել կոլխոզների նախագահներին, ՄՏԿ-ների գիրեկոտորներին և Հողային օրդաններին կտավհատի տակ զրվող ամբողջ տարածություններն ամեն տարի ժամանակին ապահովել նախագութանիկոր գութանով կատարվող ցրտահերկով» (3/IV—1938թ.)։ Հողային օրդանները, ՄՏԿ-ների գիրեկոտորները և կոլխոզների նախագահները բոլոր միջոցները պետք է ձեռք առնեն այս որոշումն անշեղորեն կիրառեն։ Միաժամանակ այս որոշումից բղիքում է, որ կտավհատին հատկացվելիք հողերը պետք է ամբողջապես հերկել աշնանից։ Եթեար տարիների փորձերը ցուցի են տալիս, որ զարնանավարը ցրտահերկով փոխարինելով միայն հնարավոր է կտավհատի բերքը բարձրացնել մոտ 15—20%-ով։ Այն դեպքում, եթե կտավհատը հաջորդում է հացահատիկին, ցրտահերկեցից բացի պարտադիր կերպով պետք է կատարել նաև խողանի երեսվար։ Այդ աշխատանքը պետք է կատարել հնձին զուվընթաց։

Ամեն մի կոլխոզնիկ գիտած կլինի, որ հնձի ժամանակ խողանակությունը փափուկ է և հեշտ է հերկվում, իսկ երբ հնձից անցնում է մի քանի օր, ապա վարը խիստ դժվարանում է և վարելիս էլ կոչաներ են ստացվում։ Հետեւապես խողանի երեսավարը պետք է

կատարել հնձի օրը, 4—5 մմ. խորությամբ՝ նախ խոնավությունը հողում պահելու և երկրորդ, հողի երեսին թափած մոլախոտերի սերմերի ծլելու համար բարեհպատճ պայմաններ ստեղծելու նպատակով։ Այդ մոլախոտերը ծլելուց հետո աշնանային ցրտահերկի ժամանակ ոչնչացվում են։


Ցրտահերկը պետք է կատարել նախադութանիկավոր դռւթանով և չփոցխել, որպեսզի խորդ ու բորդ ականերում ձյուն և խոնավություն ավելի շատ հավաքվի։ Ցրտահերկի խորության հարցը որոշելիս նկատի պետք է ունենալ, որ կտավհատը շատ բավ զարդանում է խոր հերկած և լավ փիրեցրած հողում։ Ուրեմն այն բոլոր գեպքերում, երբ հողի հզորությունը թույլ է տալիս, պետք է վարել 25—30 մմ. ոչ պակաս խորությամբ։ Իհարկե վարը պետք է կատարել մեծ բնամքով և առանց խորակների։ Ինչ վերաբերում է շարքահերկ կուլտուրաներից աղատված հողամասի մշակմանը, այդպիսի հողամասում նույն պես պիտի կատարել ցրտահերկ՝ նախադութանիկավոր դռւթանով։

ՀՈՂԻ ՆԱԽԾԱՆՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գարնանը նախքան կտավհատի ցանքը, պետք է լուծել հետեւյալ կարենությունն ինդիքտները։ 1. պահպանել հողում կուտակված խոնավությունը, 2. հարթել, հավասարեցնել հողի մակերեսը (որի կարիքը գյուղանախեսական կուլտուրաներից ամենից շատ զգում է կտավհատը), որպեսզի հնարավոր լինի ցանել և նորմայ խորությամբ ծածկել սերմերը և 3. դաշտն աղատել մոլախոտերի մնացորդներից։

Աշնանից նախադութանիկով լսվորակ հերկած հողը գարունը բացվելուն պես, հենց որ հնարավոր է լինում վարած հողի մեջ մտնել և չցնի խոտվել, անմիջապես պետք է խաչաձև փոցինել, կամ քարշակել։ Հողի երեսը պինդ լինելու գեպքում նույն աշխատանքը պետք է կատարել մեխաքարչակով, որը նույն քարշակն է, միայն առջևի հարթող լծակի վրա շարված են մեխեր (առամներ) (նկ. 4)։

Ինչպես նկարից երեսում է, այս գործիքը շատ հասարակ է և ամեն մի կոլխոզի արհեստանոցում հնարավոր է այն պատրաստել։ Այդ գործիքի աշխատանքին թե՛ ակազեմիկ վիլյամը և թե՛ ստախանովականները մեծ նշանակություն են տալիս։ Քարշակը հարթում է հողի մակերեսը և փշում է կեղեր։



Նկ. 4. Մեխաքարշակ

Քարշակումը կամ մեխաքարշակումը խորհուրդ է տրվում կատարել վարին չղակի, այսինքն ոչ վարի ուղղությամբ և ոչ էլ նրան ուղղահայց : Այդ աշխատանքը պետք է կատարել առանց ուշացման և թույլ չտալ, որ հողից ավելորդ խոնավություն գոլորշիանա, որը բացասաբար է աղղում բերքատվության վրա :

Փոցմելուց կամ քարշակելուց հետո, երբ հողը հասունացել է վարի համար (քեզի է եկել) և մոլախոտերն էլ սկսել են ծլել, պետք է էքստիրպատորով՝ կամ առհասարակ կտրող թաթիկներ ունեցող կուլտիվատորով (իսկ եթե մոլախոտեր չկան, սովորական կուլտիվատորով) կատարել հողի փխրեցում 6—8 սմ . խոռությամբ և նույն օրը (այսինքն ցանելուց առաջ), բացի ծանր կալվահողերից, նաև փոցխել : Բացի այդ, երբ հողում նկատվում են ձիմի մնացորդներ, կոճղարժատներ և կամ քարեր, պետք է այդ բոլորը խնամքով հալվաքել : Թվարկած բոլոր աշխատանքները ժամանակին և խնամքով կատարելու դեպքում հողի երեսը չտա փափուկ և հարթ է լինում և ցանքը կատարելիս կտալիատի սերմերը թաղվում են պահանջված խորությամբ (1—2 սմ.) :

Նախացանքային աշխատանքները խնամքով և ժամանակին կատարելն աշխատանքների ողջ սիստեմում բերքատվության բարձրացման ահեսակետից կարեռագույն նշանակություն ունի:

ԿՏԱՎՀԱՏԻ ՍԵՐՄԱՑՈՒԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒՄԸ

Բերքատվության բարձրացման խնդրում առանձնահատուկ տեղ է դրավում կտավհատի սերմացուի որակը: Պետք է խիստ հաշվի առնել այն հանդամանքը, որ կտավհատի սերմերը 14 տոկոսից ավելի խոնավություն պարունակելու և պահեստի սովորական չերմաստիճանի տակ պահպելու դեպքում երեք ամսվա ընթացքում բոլորովին կորցնում են իրենց ծլունակությունը: Հաշվի պիտի առնել նաև այն, որ կտավհատի սերմերը ոչ լրիվ հասունացած ժամանակ հավաքելիս շատ ցածր ծլունակություն են ունենում: Յանքից 2—3 օր առաջ կտավհատի սերմերը պարտադիր կերպով պետք է ախտահանել (Դավիդովի փոշիով):

Կտավհատի սերմերին վնասում են պահեստի զանազան վնասառուները, մանավանդ տիպը (ամբարնի կլեպիկ): Այդ վնասառուն ավելի ուժեղ է զարգանում, երբ հատիկներում խոնամությունը 13%-ից ավելի է լինում:

Այդպիսի տիպերով վարակված կտավհատն անպետք է և վնասակար նաև մարդկանց ու կենդանիների համար: Միանգամայն պարզ է, որ կտավհատին հատկացրած պահեստը պետք է լինի խնամքով ախտահանված: Խորհուրդ է տրվում պահեստի հատակը տախտակով պատել: Այն պահեստում, ուր կտավհատի սերմեր են պահպում, խոնավությունը բարձր չպետք է լինի: Մերմացուն պահեստում հաճախակի պետք է ստուգել, և երբ նրա չերմաստիճանը բարձրանում է, իսկույն բարակ շերտով փոել և հաճախակի խառնել:

Կտավհատի դաշտերը սովորաբար խիստ վարակված են լինում պոչուկով, խարդարով, սորուկով, անգամ զաղցով, ուստի կտավհատի սերմերը սերմագտիչների միջոցով 100%-ով պետք է մաքրել մոլախտուերի սերմերից:

Գաղձի սերմերով վարակված կտավհատը ոչ մի գեպքում չի կարելի ցանել: Իսկ եթե սերմագտիչ չկա, սերմացուն պետք է մաքրել մաղերով, անգամ ձեռքով, որպեսզի բերքատվության այդ կարեռ միջոցառումը ևս կիրառվի լրիվ:

Խնամքով պահած և կոնդիցիոն սերմացուն պետք է լինի փայլուն, բաց շագանակագույն, ունենա հարթ մակերես՝ ա-

ունց խսրչերի : Զուրը դցէլիս լավ սերմացում պետք է երեսին մնա : Կտավհատի սերմացուի մաքրությունը պետք է լինի 99% , իսկ ծլունակությունը 95%-ից ոչ պակաս :

Կտավիատի սերմերի յարովիզացիան : Յարովիզացիան բարձրացնում է կտավհատի բերքատվությունը և կրճատում վեգետացիան : Կտավհատի սերմերի յարովիզացիան կարելի է կատարել գիտության թեկնածու Միքոլյուրովի առաջարկած մեթոդով, որի էռությունը հետեւյալն է . 100 կիլոգրամ սերմին խառնվում է 55 լիտր ջուր, երեք հերթի՝ յուրաքանչյուր 5—6 ժամը մեկ անդամ սերմերին ալիքացվում է նախատեսված ջրի մի երրորդը : Զուրը պետք է լինի սենյակի ջերմության , այսինքն 16°-ի : Յուրաքանչյուր անդամ ջուր ալիքացներուց և խառներուց հետո պետք է սերմացուի վրա լցնել նրա նախնական քաշի 15%-ի չափով տորֆ, կամ 25%-ի չափով Փոսֆորիտի ալյուր և այդպես ուղահել հինգ օր :

ԿՏԱՎՀԱՏԻ ՑԱՆՔԸ

Ցանքի ժամանակը : Կտավհատի բերքատվության բարձրացման դորժում վճռական դեր է խաղում ցանքի ժամանակը : Կտավհատի ցանքը պետք է կատարել վաղ գարնանը : Այդ ուղղությամբ կան բազմաթիվ փորձեր, որոնք ապացուցում են վաղ ցանքի կարևորությունը : Հայաստանի որոշ կոլխոզներում կտավհատը ցանում են այն ժամանակ, երբ մյուս կուրտուրաների ցանքը վերջացած է : Այդպիսի ուշ ժամկետի ցանքը աշնան սկզբին, գեր վեղեռացիան չվերջացած, ցրտահարվում է : Օրինակ, 1941 և 1942 թ. թ. Հմեմ-ի կողմից ինցիդրած աղբուկանոններին հակառակ, ցանքը կատարվեց ուշ ժամկետներում, որի պատճառով մեր մի շարք շրջաններ շատ քիչ բերք ստացան (Ղուկասյան, Ամասիա) : Նկատի ունենալով կտավհատի ցանքի ժամանակի կարևորությունը, Դաշտավարական Գիտահետազոտական կայանը 1941—42 թ. թ. Հայսստանի զանազան հողակիմայական պայմաններում ցանքի ժամկետի փորձեր կատարեց : Թե կոտայքի շրջանի կապուտան գյուղում կատարված փորձերը, թե Լենինականի փորձադաշտում և թե Ղուկասյանում 1941 թ. և 1942 թ. գրած փորձերն անվիճելիորեն ապացուցեցին վաղ ժամկետների առավելությունը : Կապուտան գյուղում մի հեկտար հողակառի վրա երեք ժամկետով ցանքած էր տեղական կտավհատ : Այդ փորձից ստացված տվյալներից երեսում է, որ 1941

թվի մայիսի 9-ի ցանքից, որ կատարվել էր խիստ չորային պայմաններում, բոլորովին բերք չստացվեց, իսկ ապրիլի 25-ին ցանած կտավհատը, համեմատած ապրիլի 9-ի ցանածի հետ, մինչև 71% քիչ բերք տվեց:

Ավելի համոզիչ տվյալներ ստացվել են Լենինականի փորձադաշտի 1942 թվի հետևյալ փորձերից (տես աղյուսակ 2):

Աղյուսակ № 2

Խ.№	Փորձի վայրը	Ցանքսի ժամկետը	Ցանի օրում հասունացավ	Բերքը հեկտարից	Ցուցիչ %
1	Լենինական փորձադաշտ ջրովի	5/V 15/V 20/V	76 78 91	14,1 11,9 9,8	43,7 41,8 —
2	Լենինական փորձադաշտ անջրդիր	5/V 15/V 20/V	73 74 78	9,1 8,3 6,6	42,4 41,2 40,4

Այս փորձերը հետաքրքր են նաև նրանով, որ կտավհատի մատղաշ ծիլերն ընկնելով՝ 3—5° սառնամանիքի տակ, չցրտահարվեցին: 1940 թվի փորձերի հիման վրա նույն եղբակացությանն է Հանգել նաև Լենինականի փորձադաշտի դիտ: աշխատակից Ա. Գուլյանյանը, որի մի շարք փորձերից երեսում է, որ կտավհատի մատղաշ ծիլերն անվնաս դիմանում են մինչև —4—5° ցրտի:

Ցանքի վաղ ժամկետի առավելությունը բացատրվում է հետևյալով:

1. Վաղ ցանած կտավհատի զարգացման կարևորագույն չըջանը (կոկոնակալում—ծաղկում) համընկնում է ավելի երկար օրերի հետ, դրա հետևանքով տեղի է ունենում բույսերի ավելի արագ աճ:

2. Վաղ ցանած կտավհատն ավելի քիչ է տուժում վնասատուներից, մանավանդ կտավհատի լվիկից, որը մեծ վնաս է հասցնում ուշ ցանած կտավհատին: Կապուտանի փորձադաշտում ուշ ժամկետի ցանքերը լվիկից տուժեցին 40%-ով, իսկ վաղ ցանքերը համարյա անվնաս մնացին: Բացի դրանից մի շարք փորձադաշտերի տվյալներից երեսում է, որ վաղ ցանքերում կտավհատը ժանդից ու ֆուլարիումից տուժում է աննշան չափով, իսկ ուշ ցանքերը տալիս են վարակման բարձր տոկոս (մոտ 38%) :

Յ. Վաղ ժամկետներում ցանելիս բավական բարձրանում է կտավհատի սերմերի յուղի տոկոսը:

4. Զուրը նույնպես կարևորագույն ֆակտոր է սերմերի յուղի %-ի բարձրացման:

Վաղ ցանքի թվարկած առավելությունները նկատի ունենալով, բոլոր շրջաններում կտավհատի ցանքը պետք է ոկտել հացահատիկների վաղ ցանքի հետ միասին և վերջացնել այն ժամանակ երբ հացահատիկների ցանքը կատարված է 50%-ով:

Ցանքի նորման: Կտավհատի բերքատվության բարձրացման խնդրում կարելոր նշանակություն ունի նաև ցանքի նորման: Դաշտավարական Գիտահետազոտական կայանի երկու հետակետերի փորձերից (Կոտայք, Լենինական) պարզվում է, որ ցանքի գոյությունը ունեցող նորման բավականին ցածր է: Այն նորման, որը ցանքում է մեր կոլլսովներում, չի նպաստում բերքի բարձրացմանը, օրինակ Կոտայքի շրջանի կապուտան գյուղում 1941 թ. ցանքում էր մի հեկտարին 25—30 կիլոգրամ և այն էլ վատորակ սերմացու: Խոկ մեր փորձերը թե՛ Լենինականում և թե՛ Կոտայքի Կապուտան գյուղում ցույց տվին, որ ցանքի նորման պետք է լինի հիսուն կիլոգրամից ոչ պակաս (նայած շրջանին անգամ 60 կիլոգրամ մի հեկտարին):

Այս նորմաները չեն վերաբերում սերմաբուծական նպատակներով ցանքինիք կտավհատին: Այդպիսի դեպքերում պետք է ցանել անհամեմատ ավելի քիչ, մոտ 20—30 կ/հ.:

Թվարկած նորմաները հնարավոր է և պետք է պակսեցնել, երբ դաշտերը ազատվեն մոլախոտերից, ավելի կուլտուրական վիճակի բերվեն, նաև երբ կիրառվի ավելի բարձր ագրոտեխնիկա:

Ցանքի խորությունը: Կտավհատի սերմերի խոր ցանքը պատճառ է դառնում բերքատվության իջեցման: Մեզ մոտ շատ կոլլսովներում ցածր բերքատվության պատճառներից մեկն էլ հենց այդ հանդամանքն է: Եղակի չեն այնպիսի դեպքերը, երբ կտավհատը ցանում են լավ չհերկած և կոշտոտ հողում, բողադքաշելով, և կամ ցորենի շարքացանով խոր ցանք են կատարում: Նման դեպքերում ծիլերը հողի երես դուրս գալ չեն կարողանում և ստացվում է նորուացած բուսածածկոց:

Տիմբրյագելի անվան ակադեմիայի փորձագալառում կատարված փորձից պարզվել է, որ կտավհատի սերմերը ծլման ամենաբարձր տոկոս են առաջի 1 ամ. խորությամբ ցանքելիս (94%)

և որ խորության հետ միասին այդ տոկոսը նվազում է, իսկ 7 սմ. խորությամբ ցանքն արգեն ոչ մի ծիլ չի տալիս: Եղած փորձերի հիման վրա կարելի է ասել, որ ցանքի ամենալավ խորություն պետք է Համարել 1,5—2 սմ.: Թեթև և փուխը հողերում կարելի է ցանել մինչև 2,5—3,0 սմ. խորությամբ:

Կտավհատը պետք է ցանել կտավհատացան շարքացանով, որը ցանում է երկու սմ. խորությամբ: Այդպիսի շարքացան չլինելու դեպքում կարելի է ցանել ձիռ սովորական շարքացանով՝ ծանրոցները հանած: Ծամ խիստ պետք է հետևել, որպեսզի սերմերը 2—3 սմ. ավելի խորը չթաղվեն: Այնտեղ, ուր հնարավորություն չկա առհասարակ մեքենայով ցանելու, ցանքը կարելի է կատարել ճեռքով (շաղացան) երկու երես: Դրա համար հողը վարելուց հետո պետք է փոցինել, մակերեսը լավ հարթել և ապա ցանել ու ցաքանել:

ՊԱՐՍ. ՏԱՅՈՒՄ

Կտավհատը խիստ դժվարուն է դեպի ագրոտեխնիկական միջոցառումները, ինչպես և դեպի պարարտանյութերը: Այդ, իհարկե, չի նշանակում, որ նա հողից ավելի շատ սննդանյութեր է վերցնում, քան դյուլատնտեսական այլ կուլտուրաները: Փորձերը ցույց են տալիս, որ նա հողից վերցնում է շատ ավելի պակաս սննդանյութեր, քան արմատապտուղները և համարյա այնքան, որքան հացաբույսերը: Զնայած դրան, նա իր արմատային սիստեմի և զարդացման ֆազերի առանձնահատկության հետևանքով խիստ պահանջնոտ է դեպի հողն ու սննդանյութերը: Այդ պահանջը քիչ է նրա զարգացման առաջին շրջանում—ծելուց մինչև կոկոնակալումը և խիստ մեծ է կոկոնակալումից մինչև լրիվ ծաղկելը: Հետևապես բոլոր աշխատանքները պետք է այնպես կազմակերպել, որպեսզի կտավհատը կոկոնակալման շրջանում լրիվ ապահովված լինի սննդանյութերով: Մեր երկրի սուախանովականների արտադրական փորձերը և գիտահետազոտական հիմնարկների ուսումնասիրությունները (որոնց թվում նաև ՀՍՍՌ ՀԺԿ-ի Դաշտավարական կայանի փորձերը) ապացուցում են, որ յուղի տոկոսի և բերքի մեծ բարձրացուց է տեղի ունենում, եթե սննդանյութերը արվում են ժամանակին և ճիշտ կոմբինացված: Կոտայքի շրջանի կապուտան դյուլում 1940 թվին Դաշտավարական կայանի աշխատակից Գ. Ալավանյանը կրկնավարի տակ դարնանը մտցրեց յուրաքանչյուր հեկտարին

60 կը. ազոտ, 75 կը. Փոսֆոր և 75 կը. կալիում, և ստացավ հետևյալ արդյունքը (աղյուսակ 3)։

Աղյուսակ 3
ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՏԱՐՐԵՐ ԿՈՄԲԻՆԱՑԻԱՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարարտ. կարիքանում Ժուցանիշները	Կոնտրոլ Օ	Ազոտ և Փոսֆոր NP	Ազոտ և կալի NK	Ֆոսֆոր և կալի PK	Ազոտ, Փոս փ NPK
Հատիկի բաշը (ց. 5.)	3,53	7,27	5,28	4,52	6,42
Ցողունի բաշը (ց. 5.)	12,45	18,62	17,59	11,65	16,41
Ցողի, ծոր մասսայից հաշված	43,06	41,91	42,94	44,00	42,63 ծոր

Ինչպես երեսում է աշխատակիր տվյալներից, աննդանյութերից NP (աղոտը և փոսֆորը) միասին, կոնտրոլի հետ համեմատած, բերքը բարձրացրել են 100%-ից ավելի, սակայն յուղի % -ի որոշ անկում է տեղի ունեցել: Ընդհակառակը, կալիումի և Փոսֆորի խառնուրդը բերքը քիչ է բարձրացրել, բայց նարաստել է յուղի առկոսի բարձրացմանը:

Մեր կոլխոզնիկները պետք է գիտենան, որ կան նաև այն-պիսի պարարտանյութեր, որոնք բույսերին արվում են շատ փոքր դոզայով, բայց մեծ ազդեցություն են թողնում նրանց այս կամ այն հատկության վրա: Այդպիսի պարարտանյութերը կոչվում են միջրո-պարարտանյութեր: Դրանցից է, օրինակ, բորաթթուն, որն ստացվում է մեր արդյունաբերությունից, որպես թափուկ: Մեր փորձերում բորաթթվով պարարտացրած հողակարում կտավհատը տվեց 44,32% յուղ պարունակող հարտիկներ, իսկ չպարարտացրածում՝ 42,48%, ըստ որում հեկտարին արվել էր ընդամենը 10 կիլոգրամ բոր-մագնիսիական պարարտանյութ, որը պարունակում է 5,7% բորաթթու:

Կտավհատի ցանքերի պարարտացման նպատակով տեղական պարարտանյութերի օգտագործումը մեծ նշանակություն է ստանում այժմ, Հայրենական պատերազմի օրերին: Մեր կոլխոզները պետք է բոլոր հնարավոր միջոցներն օգտագործեն՝ կտավհատի դաշտերը և նրանց նսխորդող կուլտուրաները մեծ խնամքով պարարտացնելու տեղական պարարտանյութերով: Այդ տեսակեալց մեծ արժեք է ներկայացնում գոմազը, որը շատ լավ ազդեցություն է ունենում կտավհատի վրա, երբ նրանով պարարտացվում է կտավհատի նախորդը: Այն գեղքերում, երբ գոմազը

տրվում է անմիջականորեն կտավհատին, պարաբռանյութը հողի ժեղ պետք է մտցնել աշնանից և վարածածկել ցըտահերկի ժամանակ: Այդ դոմաղբը պետք է փոսած լինի:

Որպես օրիենտիր նորմա, կտավհատի տակ կարելի է տալ փոսած գոմաղբ՝ 20 տոնն, մոխեր՝ 5,7 ցենտներ, կալիումի աղ՝ 40%-անոց մեկ ցենտներ, սուպերֆուֆատ՝ 3 ցենտներ և սուլֆատ ամոնիում՝ 2,5 ցենտներ: Իհարկե, այդ նորմաները միմիայն օրիենտիր են: Դրանց քանակը կտաված է հողում եղած անդաշնյութերի պաշարից, նախորդ կուլտուրաներից, սպասվելիք բերքից և այլ պայմաններից: Պարաբռացման նպատակով պետք է լոյնորեն օգտագործել նաև երկար տարիներ մշակության մեջ չեղած թմբերի և առուների եղբերի հողը, առուներից դուրս բերված տիղմը և այլն: Ինչպես հայտնի է, այդպիսի պարաբռանյութ ամեն մի ցանկելիք հողակտորի մոտ կճարվի, որը պետք է անպայմանորեն օգտագործել, նախօրոք այն ժաքրելով մոլախոտերից:

Պարաբռանյութերը մեծ մասամբ հողին պիտի տալ աշնանից, ցրտահերկի տակ, մանավանդ այդ վերաբերում է օրդանական և դժվար լուծվող պարաբռանյութերին: Հեշտ լուծվող պարաբռանյութերը պետք է տալ դարնանը՝ կուլտիվացիայի տակ: Կտավհատը լավ է օգտագործում նաև հեշտ լուծվող մի շարք պարաբռանյութեր, եթե նրանք տրվում են որպես սնուցում: Բայց այդ սնուցումը պետք է տրվի խոնավության առկայության պայմաններում և այն էլ մինչեւ կոկոնակալումը կամ կոկոնակալման ժամանակ: Շատ մեծ էֆեկտով սոտախանովականներն օգտագործում են նաև թունաղբը, գոմաղբի հեղուկը, դիշերային ոսկին: Այդ բոլորը մեծ մասամբ տրվում է ջրի մեջ լուծված դրությամբ:

ԿՑԱՎՀԱՑԻ ՀԵՑՑԱՆՔԱՑԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ


Հետանքային մշակության խնդիրն է. նախ և առաջ օդ-նել ծիլերին՝ հողի երես դուրս գալու: Եթե ժամանակին կտավհատը չի ծլում, հողը կարելի է փոշուել կամ քարշակել մեխաքարշակով: Շատ վաղ ցանքերում կեղեվակալման առաջն առնելու համար կամ մի կարևոր միջոց ևս—զա մուլչացումն է, որ կիրառվում է Միության լավագույն սոտախանովականների կողմից: Դրա կությունը հետեւյալն է. ցանքից անմիջապես հետո, նույնիսկ ցանքին զուգընթաց, հողի երեսին փոռում են մանրացրած տորֆ մինչև 1,5 սմ. Հաստությամբ, որը հեկտարին կատ-

մում է մոտ 40 տոնն : Եղած բաղմաթիվ փորձերը ցույց են տալիս , որ այդ միջոցառումներն ամենից առաջ վերացնում է կեղեցակալման վտանգը , առաջ թարմ ու նուրբ բույսերը պաշտպանում է ցրտահարումից , իսկ ինքը տորֆը ծառայում է նաև որպես օրդանական պարարտանյութ և առաջավում կտավհատիք բարձր բերքատվությունը : Մուլչացումը , մի շարք կայանների տվյալներով , ավելացնում է հատիկների բերքը 4—36%-ով , ցողունինը՝ 16—50 տոկոսով : Մեզ մոտ հիմնական կտավհատացան չքջանները (Աճասիա , Դուկասյան , Բասարգեչար , Մարտունի) , որտեղ կա տորֆ , պետք է հետեւն Միության ստախանովականների օրինակին և կտավհատիք բարձր բերքատվությունն աղօհագիւլու համար ցանքին զուգընթաց դորձածեն տորֆ , որուն մուլչ :

Մյուս կարեոր միջոցառումը հետցանքային աշխատանքների սիստեմում մոլախոտերի դեմ մզգող պայքարն է : Մեզ մոտ կտավհատիք ցանքերի հիմնական մոլախոտերն են՝ խրիտելը , սորուկը , պատաստուկը , խարդալը , կտավհատիք որոմը , զեղավերը , մի քանի այլ մոլախոտեր և պարագիտ գաղձը :

Կտավհատացան ստախանովականներն իրենց գաշտերը մոլախոտերից միշտ մաքուր վիճակում են պահել և եթե կարիքն ասիպել է քաղցանել են չորս անդամ : Մեզ մոտ կտավհատիք ցանքերը առնվազն երկու անդամ պետք է քաղցանել . մեկը ծեւերը հողից զուրս զարու ժամանակ , իսկ մյուսը կոկոնակալումից անմիջապես առաջ : Այն գեսքերում , երբ կտավհատիք ցանքերում երևացել է զաղձը , նրան կտավհատիք բույսի հետ միասին պետք է ինամքով համարել , արաից հանել և այրել : Դաշտավարական կայանի Լենինականի փորձագաշտում երկու քաղցան կատարելու դեպքում (մեկը ծեւերը , մյուսը կոկոնակալման ժամանակի) ստացվել է 14,2 ց/հ . Հատիկ , իսկ չքաղցանած արտում՝ 6 ցենաներ :

Բերքատվության բարձրացման դորձում վճռական նշանակություն ունի նաև կտավհատիք դաշտերի ոռոգումը և ընդհանուրպես հողում խոնավություն պահպանելը : Պետք է ձևոնարկել բոլոր միջոցները՝ կտավհատիք ցանքերը զոնե մեկ անդամ—կոկոնակալման նախօրյակին , ջրելու : Բացի այդ , պետք է կիրառել հողի մշակման և ցանքերի ինամքերի լրիվ կոմպլեկսը , որպեսզի բույսերն իրենց աճման ու զարգացման ամրող ժամանակաշըրջանում աղօհագիտված լինեն խոնավությամբ : Կտավհատիքն արված



Նկ. 5

Կառվհատը պարագիս դադավ փաթաթիլոծ

անհրաժեշտ քանակությամբ ջուրը ոչ միայն ավելացնում է բերքի քանակը, հատիկների արտոյուտ քոշը և ցողունի ձևասան, այլ բարձրացնում է նաև յուղի տոկոսը։ Մեր պայմաններում կառվհատի ցանքը ըստ կարելի ջրել ծաղկման ժամանակ և զրանից հետո, որովհետև դրանից երկարում է բույսերի վեցետացիան և մեծանում է ցրտահարման վտանգը հատկապես բարձր լինային ըրջաններում։

ԿԸԱՎՀԱՏԻ ՀՅՈՒՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎՆԱՍԱՏՈՒՆՔՐԸ

Կառվհատի բարձր բերք ստանալու գործում՝ առաջնակարգ նշանակություն ունի վնասատուների և հիմանդրությունների գեցազելիք պայքարը։ Ինչպես ցույց են տվել Դաշտավարական գիտահետազոտական կայանի կողմից կատարված հետազոտու-

թյունները ՀՍՍԹ-ի պայմաններում կտավհատին վնասում են մի չափ վնասառառներ, որոնցից ամենավտանդավորն է կտավհատի կապույտ լիմիլը, և հիվանդություններ, որոնցից վնաս է պատճառում Փուղարխողը:

ԿՑԱՎՀԱՑԻ ԿԱՊՈՒՅՑԸ ԼՎԵԱՅ

Տարածված է և վնասում է Հայաստանի բոլոր այն շրջաններում, որտեղ մշակվում է կտավհատը: Հասուն բզեզները 1,5—2,0 մմ. երկարության, փայլուն, կապույտ-բրոնզա գույշնի միջամտներ են: Զմեռում են հասուն վիճակում՝ հողի կամ դաշտում եղած զանազան բուսական մնացորդների մեջ:

Վաղ վարնանը՝ տաք օրերին նրանք գուրս են զալիս իրենց ձմեռներու տեղերից և սկսում են անվել գաշտում եղած զանազան մորախոտերով (զլլամվորապես խաչաղպիների ընտանիքին պատկանող): Կտավհատի ծիլերը երեալու հենց սկզբից լիմիները մորախոտերից անցնում են նրանց վրա և սկսում վնասել կտավհատին: Վնասն առանձնապես ուժեղ է լինում չոր և տաք եղանակներին:

Երբ օգի չերմաստիճանը հասնում է 20-ի, բզեզներն սկսում են թռչել, բեղմնավորվում են և ձու ածում: Զվերն ածում են հողի մեջ կամ բույսերի արմատների վրա՝ մեկական կամ կույտերով (3—5 հատ): Ամեն մի էղ բղեղ ածում է մինչև 300 ձու: Զվերից զուրս եկած թրթուռներն ապրում են հողի մեջ, անվելով կտավհատի արմատներով: Զվերից զուրս զալուց 15—20 օր հետո թրթուռները հարսնյակալորժում են, իսկ 18—20 օր հետո հարսնյակներից զուրս են զալիս նոր բզեզներ—հունիսի վերջին կամ հուլիսի առաջին կեսին: Նոր զուրս եկած բզեզները նույնագետ սնվում են կտավհատով և օգոստոսի վերջերին կամ սեպտեմբերի սկզբներին անցնում են ձմեռներու:

Հասցրած վնասը: Բնչզիս տեսանք, լիմին անցնում է կտավհատի դաշտերը և սկսում է վնասել վաղ վարնանից, երբ դեռ բույսերը չստո փոքր են: Վնասում է ինչպես խակական տերևներին, նույնպես և շաքիլատերիներին, նրանց վրա կլոր անցքեց բաց անելով: Եթե բույսերը փոքր են, ապա լիմիկի վնասքը բարդ է առանք ամրողապես մհանում են: Քիչ դեպքեր չեն վածքից նրանք ամրողապես մհանում են: Քիչ դեպքեր չեն կտավհատով կտավհատը 100 տոկոսով ոչնչացվել եղել, երբ լիմիկի պատճառով կտավհատը է և անհրաժեշտ է եղել կրկնացան անելու: Հասակն առած բույտերին վնասելիս բզեզները կրծում են նաև ցողունի կեղիը և պա-

բԵնքիմը : Վհասի այս ձեն առանձնապես վատանգավոր է թելատու կտավհատի համար, որսվհետեւ այս գեղքում մեծ չափով ընկեռում է թելի որակը :

Լվիկի թրթուռները սնվում են միմիայն կտավհատի արձատներով : Այս վհասի պատճառով նույնական հաճախ մեռնում է ամբողջ բույսը : Բացի անմիջական վնասովց, բիբկները պատճառում են նաև անուղղակի վնաս՝ նպաստելով զանազան հիվանդությունների տարածմանը (Փուղաբիոզ, պալիսպորոզ և այլն) :

Պայքարի մերժումները : Լվիկի դեմ կիրառվող պայքարի միջոցառումների մեջ առաջնակարգ նշանակություն ունի ցանքի ժամկետը : Նկատված է, որ վաղ ժամկետների ցանքերը բույրովին չեն վնասվում կամ քեզ չափով են տուժում լվիկից, քանի որ նախքան ձմեռած լվիկների աշխուժանալը, կտավհատի բույրներն արդեն մեծացած են լինում, ամրանում են և քիչ են տուժում լվիկի պատճառած վնասվածքներից :

Բոլորից շատ տուժում են միջին ժամկետներում կտարգիած ցանքերը, որովհետեւ այս գեղքում կտավհատի ծիլերի դուրս դալը համընկնում է լվիկների ամենաաշխուժ և վնասակար չեղանին :

Պայքարի տեսակետից կարեոր նշանակություն ունի նաև սեղմ ժամկետներում կտարգիած ցանքը, որովհետեւ ձգձգված ցանքի գեղքում բգեղները վաղ կտարգիած ցանքերից պարբերաբար անցնում են ուշ կտարգիածների վրա և ավելի շատ վնասում նրանց :

Վաղ կտարգիած բերքահավաքը նույնական ունի առաջնականում է կտավհատը լվիկի տմառային սերնդի վնասովց : Կտավհատի բերքահավաքից անմիջապես հետո պետք է կտարգի խողանավարչ որպեսպի ոչնչացվեն զաշտում մնացած կտավհատի բույսերը և ամառային բգեղները դրկվեն սնվելու հնարավորությունից :

Պայքարի քիմիական մեթոդներից լավ արդյունք է ատլիս կտավհատի փոշտումը կացիումի արսենատով, յուրաքանչյուր չեկտարին ուլով 8—10 կգր : Նույն նպատակի համար կարելի է օգտագործել նաև ծխախոտի և պիրետրումի փոշին, չեկտարին ուլով 20—25 կղր :

ՑՈՒԶԱՌԻՈԶ (ԹԱՌԱՄՈՒԻՄ)

Կտավհատի Փուղաբիոզ հիվանդությունը տարածված է առենուրեք, որտեղ մշակվում է կտավհատը : Վարակում է կտավհա-

տին նրա զարգացման տարբեր շրջաններում։ Ֆուզարիողով հիմնադաշտ բույսի ամենաբնորոշ հատկանիշն այն է, որ նրանով վարակված տերևները և ցողունը թափառում են և մեռնում։ Զորությունից մեռած բույսերից ֆուզարիողով հիմնադները տարբերվում են նրանով, որ վերջինների մոտ չորանալու դեպքում գագաթը միշտ թեքված է լինում մի կողմի վրա, ունենալով է դորշ զույն և հողից հեշտությամբ դուրս է գալիս։ Տարածվում է սերմերի, հողի, բուսական մնացորդների և միջամտների միջոցով։

Պայքարի մեթոդները։ Այն հանդամանքը, որ ֆուզարիողը տարածվում է նաև սերմերի օգնությամբ, անհրաժեշտ է զարձնում սերմերի ախտահանումը՝ նախքան ցանելը։ Ախտահանումը կատարում են ՊԴ պրեսուրապով։ Մեկ տոնն սերմացիին օդուագործվում է 1,5 կգը։ պրեսուրաստ։ Ախտահանումը կատարվում է չոր ախտահանման համար օգտագործվող մեքենաներով։

Ախտահանումը պետք է կատարել ոչ չուտ, քան ցանքից 2—3 օր առաջ։

Պայքարի մյուս մեթոդներից կարեոր են հետելյաները։

1. Կտավհատը պետք է ցանել լույլ նախորդից (բազմամյա խոտերից) հետո։

2. Ֆուզարիողով ուժեղ չափով վարակված շրջաններում նույն զաշտում կտավհատը պետք է ցանել ոչ չուտ, քան 5—6 տարի հետո։ Ոչ մի դեպքում չի թույլարիլում կտավհատը նույն տեղում ցանել երկու տարի իրար հետեւց։

3. Դաշտում եղած կտավհատի բոլոր մնացորդները բերքահավաքից հետո պետք է զաշտից հետացնել։

4. Յանքը պետք է կտարել ստուգված սերմերով։ Սերմերը ֆուզարիողով 5 տոկոսից ավելի վարակված լինելու դեպքում ցանքի համար չպետք է օգտագործվեն։

ԿՏԱՎՀԱՏԻ ԲԵՆՔԱԾԱՎԱՐՔԸ

Յուղատու կտավհատի բերքահավաքը պետք է կատարել նրա լրիվ հասունացման ժամանակ, երբ սերմնատուիներն ընդունում են դորշ, իսկ հատիկները՝ նորմալ շագանակագույն տեսք։ Հավաքը պետք է կաղմակերպել շատ կարճ ժամկետում։ Եթե կուլտուրը վճռել է տեղական կտավհատի ցողուններից նաև թել ստանալ, ապա պետք է բույսերն արժատահան անել, կապել փոքրիկ փուրձեր 10—12 սմ։ արածաղծով և զաշտում զարսել կոնածե կամ վրանաձեւ (նկար 8)։

Կտավհատը չորացնելուց հետո պետք է կալսել։ Այդ նպա-

տակի համար կարելի է օգտագործել նաև ցորենի կալսիչ մեքե-
նաներ, եթե միայն չի նախառեսնվում կտավհատի ցողուններն
օգտագործել թել ստանալու համար: Կալսելուց հետո կտավհատի
սերմերը պետք է հաջորդաբար անցկացնել սերմ զոտղ մեքենա-
ներով, այն հաշվով, որպեսզի ստացվի միանդամայն մաքուր ու
կոնդիցիոն հատիկ:

Մերժացուն պահեստ տեղափոխելու ժամանակ 13%-ից ավե-
լի բարձր խոնախություն չունենա:

ԹԵՂԱՏՈՒ ԿՏԱՎՀԱՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կտավհատը բավական ունիկերասալ կուլտուրա է: Այսուղ,
ուր կիման ավելի մեղմ է, ամառը քամիների ուժը մեծ չէ և
կտավհատի կոկոնակալման ժամանակ անձրեներ շատ են զալիս,
մշակվում է բացառապես թելատու կտավհատը, իսկ այն հր-
կըրներում ու ոայոններում, որոնք ունեն երկար և տաք վեզե-
տացիոն շրջան և որտեղ կտավհատն ավելի շատ ճյուղավորու-
թյուններ ու սերմ է տալիս, մշակվում է յուղատու կտավհատը:
Մեղ մոտ, Հայաստանում բացի բամբակացան շրջաններից,
կտավհատը տարածված է բոլոր շրջաններում, 1200—2000 մետր
բարձրության վրա: Կտավհատի նմանութիւնակ հատկությունը,
նրա անցյալը Հայաստանում և վերջին տարիների մի շարք հա-
մողեցուցիչ փորձերը հնարակություն են տալիս մեզ առաջա-
զրելու թելատու կտավհատի մշակության հարցը մեր մի շարք
բարձր լեռնային ոայոններում, որտեղ այն ունի զարգացման
բոլոր տվյալները: Այդ ոայոնների շարքը կարելի է դասել՝ Ա-
մասիան (գլխավորապես Արփա լճի շուրջն ընկած գյուղերը),
Դուկասյանը՝ (առաջին հերթին Արփաչայ գետի շուրջը գտնվող
և նրա ջուրն օգտագործող կոլտողները), Կարմիրի շրջանը և այլն:
Այդ շրջանների հողակլիմատական պայմանները քիչ են տար-
բերվում Միության այն ոայոնների հողային և կլիմայական
պայմաններից, որոնք ճանաչված են որպես թելատու կտավ-
հատի մշակման հիմնական վայրեր: Բացի դրանից, այդ շրջան-
ներն ունեն 180 օրից ոչ պակաս տեղուդ անսառնամանիքային
ժամանակամիջոց, 650 մմ. տեղումներ, որից 150 մմ. տե-
ղում է մայիս—հունիս ամիսներին, որը միանդամայն բավա-

բար է, եթե կտավիչատի ցանքը կատարվի վաղ ժամկետներում
(աղյուսակ № 4):

Աղյուսակ № 4.

Հ Ա.	Վայրը	Միջին չո ժարիս-հունիս ամիսներում	Տեղումների տարեկան միջինը մ.մ.
1	Մոսկվա	19	530
2	Լենինգրադ	11	470
3	Ամստերդամ	14,7	650
4	Լենինական	19,2	470
5	Մարտունի	16,5	433

Այս աղյուսակի թվերը խոսում են այն մասին, որ թելառու կտավիչատի համար վերեւում հիշված ըրջաններում կան միանգամայն նպատակոր պարմաններ: Վերջապես Արփա լճի և Արփաչայ գետակի ջրերը թրչոց զներու տեսակետից նոյնակեռ միանգամայն պիտանի են, որը մեծ նշանակություն ունի թելառու կտավիչատի զարգացման հետանկարների տեսակետից:

1926—27 թվականներին հիշյալ ըրջանների մի շարք զյուղերում, մոտ 100 հեկտար տարածության վրա, զբաղածուենաներ Գ. Հարությունյանը և Խ. Հովսեփյանը ցանել են թելառու կտավիչատ: Եղած տեղեկությունների համաձայն, այդ կտավիչատն աճել ու զարգացել է միանգամայն նորմալ, ունեցել է մոտ մի մետր բարձրություն, իսկ թրչոց դրած կտավիչատի թելիքը պատկը պատկաս չի եղել, քանի թելառու կտավիչատի մշակման հիմնական ըրջաններում:

1940 թվին պետակոմիսիայի Դուկաոյանի փորձադաշտում ցանկել են մի քանի սելիկցիոն սորտեր: Զույցած ցանքը կատարվել է ուշ, բայց և այնպես ստացվել են միանգամայն զոհացուցիչ արդյունքներ: Բայց սուսանձնի սորտերի պատկերը հետեւալնել է. (աղյուսակ 5):

Աղյուսակ № 5.

Հ Ա.	Սորտերը	Ցանքի ժամանակա- կը	Ծակ- իրացը	Հասու- նացուցիչը	Վրերի դիմուցը առնացնա- ւումը	Բար- իկ նորմա- գույնը	Բար- իկ նորմա- գույնը	Տեղու- մների մակարդա- կը
1	Պորեղիակի	8/6	6/8	2/9	7/4	77	66,5	
2	Դ. Ա. № 33	"	7/8	"	74	76	64,4	
3	806/3	"	"	"	74	80,5	68,1	
4	1288/12	"	"	"	74	76	65,5	

Այս թվերից նախ պարզվում է, որ փորձարկված սորտերը բավականին վաղահաս են և ազատ կարող են մշակվել մեզ մոտ։ Երկրորդ, դրանց պրոդուկտիվ և ընդհանուր բարձրությունը համարյա այնքան է, որքան թելատու կտավհատի մշակման ըլլը չանհերում, որ կարեոր է լավորակ թել ստանալու համար։

1941 և 1942 թվին Հայաստանի մի քանի վայրերում Գաշտավարական կայանի կողմից փորձարկվեցին թելատու կտավհատի մի քանի աչքի լնինող սորտեր (Լենինականի փորձագաշտում ըրտի պայմաններում, Ղուկասյանում և Երևանում)։ Զնայած մշակման մի չափ թերություններին, ստացվեց միանգամայն բավարար արդյունք։ Լենինականում ցանքը կատարվեց 29/I շաբաթականով, 140 կիլոգր/հեկտ. նորմայով։ Ստորև բերում ենք այդ փորձերի տվյալները (աղյուսակ 6)։


Աղյուսակ № 6

№ Ն. ըստ հարգի	Սորտերը	Ծիլերի հրեալը	Մաղկու- մը	Հան- ցումը	Օրդին- ականը	Ծիլերի հանցանու- թը	Պանելիք հանդիպ- մանը
1	Դ. Ա. № - 33	12,5	29,6	15,7	83		2,5
2	Պորեգիտեր № - 0107	12,5	27,6	14,7	82		1,0
3		12,5	29,6	15,7	82		1,5
4	Պակովի աղնիա- ցրած	11,5	28,6	14,7	82		0,5

Այս թվերը նույնպես հաստատում են վերոհիշյալ եղբակացությունները։

Սակայն պետք է ասել, որ ջրովի պայմաններում այդ թելատու սորտերն աճում են շատ փարթամ, իսկ սերմնատուֆերի քանակը լինում է համարյա այնքան, որքան անջրդի պայմաններում ցանած յուզատու տեսակներն են ունենում։ Համարյա միանման տվյալներ հասունացման և թելատության տեսակետից ստացվել են նաև Ղուկասյանի և Երևանի ցանքերից։

Մինչև այժմ եղած տվյալներից երեսում է, որ Հայաստանում ցանած թելատու կտավհատից վաս որակի թել չի ստացվում, չնայած թել հանելու ցածր տեխնիկային։ Լենինականի փորձագաշտում ցանած և Արփաշայի ջրերում՝ անհամեմտու առիլի պրիմիտիվ պայմաններում թթոց գրած թելատու կտավհատից մենք ստացանք հետեւյալ արդյունքները (տես աղյուսակ № 7)։




Նկ. 6. I Տեղական յուղատու, II Մեծնումնի, III Թելատու Դառկասյանում, IV Թելատու Անդրբականում, V թելատու Երևանում

Աղյուսակ № 7

Ա. Ա. ըստ զարգի	Աղյուսակը	Լայնութիւն թել չ. չ.	Պակախան թել չ. չ.	Ըստութիւններ թել չ. չ.	Ենթակախան թել չ. չ.	Ենթակախան թել չ. չ.	Ենթակախան թել չ. չ.	Ենթակախան թել չ. չ.
1	2	3	4	5	6	7	8	
1	Դ. Ա. №—33	4	4,1	8,1	7,4	3,2	35,36	
2	Պորեգիսել	3	1,2	4,2	4,6	4,0	36,92	
3	№—0107	3,6	2,2	5,8	6,0	3,6	36,93	
4	Պակախի ազ- աբացքած	5	2,2	7,2	8,8	3,7	36,59	

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ Հեկտարին
8,1 տեսաներ թել տալու հետ միասին ստացվում է նաև հատիկ-

ների զգալի բերք: Իսկ մեր բերուծ թվերն անհամեմատ ավելի
ցածր են այն ուեալ Հնարավորություններից, որ կան մեր մի
քանի լիռնային շրջանների պայմաններում: Մենք թրջեցինք նաև
տեղական յուղատու կտավհատի ցողունները: Ստացված տըլ-
յալները և մեր Միության բազմաթիվ շրջաններում եղած փոր-
ձերը վկայում են յուղատու կտավհատի ցողուններից թել ստա-
նալու մեծ հնարավորությունների մասին: Այդպիսի ցողուննե-
րից ստացված թելն արժեքավոր հումք է զանազան պարաններ
ու պարկեր պատրաստելու համար: Ամենահամեստ հաշիվներով
մեր կոլլոգներն այդ դործը կազմակերպելու դեպքում կստանան
2—3 հազար տոննա պարանի և այլ կարիքների համար պիտանի
թել:



Նկ. 7. Կտավհատի սորտերը և նրանց թելը
Թելացուի կտավհատի պարուսնեինկալանի Եվ. Տեսնոլոգիաթիւ
Մի քանի սուսաջնաշատակութօնունները

Այն բոլորը, ինչ որ ասված է գրքույկի նախորդ գլուխնե-
րում կտավհատի աղբոտեխնիկայի մասին, մեծ մասամբ վերա-

բերում է նաև թելատու կտավհատին: Այս գլխում խովելու է թելատու կտավհատի մի քանի առանձնահատկությունների մասին միաըն:


Առաջին առանձնահատկությունը դա ցանքի նորմայի հարցնէ: Յուղատու կտավհատի հիսուն կիլոգրամ ցանքի նորմայի գիւմաց թելատու կտավհատի սերմ մի հեկտարում ցանվում է 140—150 կիլոգրամ: Մեր Միության մի շարք ստախանովական-ներ ցանվում են նույնիսկ 180—220 կիլոգրամ:

Այդ կատարվում է նրա համար, որպեսզի ստացվի ավելի նույնը և չցյուղավորված ցողուն, որն առաջին նախապայմանն է լավորակ թել ստանալու համար:

Թելատու կտավհատի մյուս առանձնահատկությունը հեճի
ժամանակն է և ցողունների խնամքը մինչև քրջոց դիելը: Իեր-
քահանգաբը կտարվում է բույսի տեխնիկական հասունացման
ժամանակ: Թելատու կտավհատի ցողունները թելի համար ամենի
չուտ են հասունանում, քան նրա սերմերը: Ցողունների հասու-
նացման տեսակետից տարբերում են կտավհատի երեք (երբեմն
նույնիսկ չորս) ստադիա: ա) Կանաչ հասունացման, երբ ցո-
ղունի ներքեց տերենների 1/3 արդեն զեղսած է լինում, իսկ սեր-
մառափակերի մեջ սերմերը դեռ կաթնային հասունացման շրջա-
նում են զանովում: Այդ ժամանակի հնձած կտավհատի ցողուննե-
րից ստացվում է նորը, մետաքսանման, բայց ոչ այնքան ա-
մուռ թել, միաժամանակ հատիկների որակն էլ շատ ցածր է լի-
նում: բ) Վաղ զեղին հասունացման ստադիա: Այդ հասունաց-
ման ժամանակի ցողունի համարյա կեսի վրա տերենները հասունա-
ցած են լինում և թափվում են, իսկ մնացած տերեններն էլ զեղ-
ուում են, սերմերն արդեն լինում են լցված և բաց շագանակի
զույնի: Այդ ժամանակի հավաքած կտավհատից ստացվում է
ամենաամուռ տեսակի թել և ոչ վաս որակի հատիկները: Մեծ
ժամանմբ թելատու կտավհատը հավաքում են հենց այդ ժամա-
նակ: զ) Լրիվ հասունացման ստադիա: Այդ ժամանակի բույսի
տերենները թափված են լինում, սերմի տուփերը զորչ, իսկ սեր-
մերը փայլուն և նորմալ գույնի: Այդ ժամանակի բերքահավաք
կտարելի կտարված է դժվարությունների և կորուսների հետ:

Թելատու կտավիատի քերքահավաքը, ինչպես նախկին գլուխներում առվել է, կատարվում է Հատուկ մեքենաներով, որոնք բույսը պոկում են արմատից: Ընդհանուր առամբ այդ մեքենան շատ նման է ցորենի խուրձկապ մեքենային, միայն այն տարրերությամբ, որ գա բույսերին ոչ թե կտրում, այլ պոկում


է արմատից և խուրձ կապում։ Սակայն այլպիսի մեքենա Հայաստանում առաջժմ չկա, ուստի այս աշխատանքը մնանակա տարիներում պետք է կատարել ձեռքով։ Կտավհատը փոքրիկ դաստաններով պոկելով հողից, պետք է դնել 4—5 ժում չորանալու։ Դրանից հետո միայն պետք է 10—12 ամ. արամագծով խրճիկներ կաղմել և դրանք դարսել կոնաձեւ (նկար № 8) կտոր վրանաձեւ։ Հնձի ժամանակ անհրաժեշտ է կտավհատը նախապես հալաքել ըստ բարձրության։ Խրձերի մեջ մոլախոտեր բոլորովին չպետք է լինեն, քանի որ զրանց ներկայությունը խիստ բացասարար է աղղում թելի որակի վրա։ Այսպես կոնաձեւ դարսած կտավհատը թողնվում է չորանալու 2—3 օր, նայած եղանակին։



Նկ. 8

Կտավիատի կալսումը։ Կտավհատը դաշտից կամ պիտի տեղափոխել առավոտյան վաղ կամ երեկոյան, երբ շոգն արդեն անցել է։ Տեղափոխման ժամանակ կորուստների գեմ պայքարելու համար սայլի վրա պետք է վոել բրեզենու և կամ մի որեւէ հարմար չոր։ Խրձերն ինեցնելուց հետո թափված սերմերը և զլխիկները պետք է հավաքել։ Կամ բերելուց անմիջապես հետո կտավհատը պետք է կալսել «կողի» տիպի կալսիչով, իսկ եթե այդպիսին չկա, այդ աշխատանքը կարելի է կատարել տեղում պատրաստված սանրով, որ մի շատ պարզ, հասարակ կործիք է և

Հաստ անհրաժեշտ է նաև յուղատու կտավհատը կալոելու համար։ Սանրը պատրաստվում է հետեւյալ կերպ։ Վերցնում են 17—25 հատ սովորական մեխ 15—20 սմ։ Երկարությամբ և ամքացնում երկաթի կամ փայտի ամուռ հիմքի վրա։ Մեխերի հեռագործությունն իրարից որեւէ է լինի 4—10 մմ։ Մեխեր չլինելու դեպքում այդ ամբողջ դրսէիքը կարելի է պատրաստել ամուռ փայտից։ Գործիքն այնքան պարզ է, որ ամեն մի կոլխողի արհեստանոցում՝ կարելի է պատրաստել (նկ. № 9)։




Նկ. 9. Սանդերը սերմատուփերը պակելու համար

Սանրի աշխատանքի հիմնական պրինցիպը կտավհատի գրւխիկները պոկելն է։ Այդ կատարվում է հետեւյալ կերպ. վերցնում են մի բուռ ցողուն և մի քանի անգամ քաշում սանրի ատամներով, մինչև գլխիկների անջատվելը։ Այդ աշխատանքի վերջում կատարվում է ցողունների լրացուցիչ սրտերովկամ, որից հետո 10—12 սմ. տրամագծով խրձեր են կապվում։ Խրձեր կապելու համար օգտագործում են խճճված ցողունները։ Խըրձերը պետք է կապել երկու տեղից՝ մեկը հիմքից 10 սմ. բարձրության վրա, մյուսը վերելից, որպեսզի թրջոց գնելիս ցողունները չխճճին։ Տեղական կտավհատը կարճ է, ուստի կարելի է կապել մեկ տեղից։ Այդ բոլորից հետո որեւէ է սկսել ցողունի թրջոց դնելը։

ԿՏԱՎՀԱՏԻ ՑՈՂՈՒՆՆԵՐԻՑ ԹԵԼ ՍՏԱՆԱԼԾ

Կտավհատի ցողունների վերամշակման նպատակը թել ստանալն է։ Այդ կատարվում է կամ ջրում թրջոց դնելու

միջնորդ կամ ցողի տակ դաշտում փռելով։ Այս եղանակի դեպքում բակտերիաները և սունկերը քայլայում են պեկտինային նյութերը, որոնցով կապակցված են լուրի թելիկները և խրձերը։ Հետագայում այդ ձևով ստացված հումքը Ենթարկում էն մեխանիկական մշակման։ Մյուս կարեոր եղանակը մեխանիկականն է, որի ժամանակ չթրջված ցողուններից ուղղակի անջատում են լուրի թելիկը և գրան հետազա մշակման ենթարկում։ Բայց այդ ձևերից, կա նաև քիմիական ներգործման ձև, որի ժամանակ ցողունների վրա ներգործում են քիմիական նյութերով։ Գոյություն ունեցող ձևերից մեր պայմաններում միանգամայն հնարավոր է կիրառել ջրում թրջոց դնելը և ցողի տակ փռելը։ Զրում թրջոցը գրվում է, եթե ջրի ջերմաստիճանը դեռ բարենպաստ է միկրոօրդանիզմների գործունեության համար։ Դրա չամար պետք է պատրաստել ցանցապատ արկղ 350 սմ. երկարությամբ, 250 սմ. լայնությամբ և 136 սմ. բարությամբ (նկար № 10), խրձերը մեկը մյուսին ամուր կպած և խնամքով




Նկ. 10. Թրջոց դնելու արկղ։

դասավորել այդ արկղի մեջ, որից հետո արկղն իջնեցնել նախապես այդ նպաստակի համար պատրաստած ջրի հատուկ ալազանի մեջ և վերեկից ծածկել որևէ ծանր իրով, որովհետեւ թրջոց դնելու առաջին օրերին խրձերը մեծ ուժով ջրի երես են բարձրանում։

Զուրն ավաղանում պետք է հոսի շատ դանդաղ։ Պեկտինյան և Այութերի քայլայման և թելի անջատման պրոցեսի տեսողությունը կախված է զրի ջերմաստիճանից։ Բարձր ջերմաստիճան ունեցող ջրում (մինչեւ 34°) այդ գործողությունը վերջանում է 4—7 օրում, իսկ սառը ջրում, մանավոնդ, երբ ջերմությունը 13° պահպան է, այդ պրոցեսն ընթանում է շատ դանդաղ։

Թրջոց գնելու համար ջրի ամենանպաստավոր ջերմությունը համարվում է 17—34°։ Այդ սահմաններում ջրի ջերմությունը որքան բարձր է, այնքան էլ պեկտինյալին նյութերի քայլայումն արագ է ընթանում։ Դրա համար էլ, թե պեղական յուղատու և թե թելատու կտավհատի թրջոցը պետք է սկսել անդիշապես հունձից հետո, երբ առուների ջուրը գեռ բավականաշափ տաք է։ Թրջոցի աշխատանքը պետք է դադարեցնել, հենց որ լուրի թելերն ամբողջ ցողունի երկարությամբ սկսում են փայտանյութից անջատվել, որովհետեւ դրանից ավելի պահելը շատ վատ է անդրադասնում թելի օրակի վրա։ Հենց որ խրձերն սկսում են ծանրանալ և ջրի տակը սուզվելու նշաններ ցույց տալ, ջրի երեսի փրփուրը քշանում է և պղպջակներ քիչ են դուրս գալիս, այդ ժամանակ պետք է հանել թրջոցից մի քանի ցողուն ու փորձել, արդյոք լուրի թելերը հեշտությամբ ցողունի փայտանյութից ամբողջ երկարությամբ պոկիվում են թե ոչ։ Դրա համար ցողունը, առնելով ձեռքի բութ մատի և ցուցամատի մեջ, սեղմում են։ Հասունացած թելը օրակաձև անջատվում է ցողունի փայտանյութից, փայտանյութն էլ հեշտությամբ կոտրատվում է և ոչ թե ծամծմվում։ Կարելի է նաև հանած ցողուններից միքանիքը չորացնել միևնույն երկու ժամ տեսողությամբ և տրորել ժամաներով։ Եթե լուրի թելերն ամբողջ ցողունի երկարությամբ անջատվում են, իսկ փայտանյութը փշրվում և թափվում է, ապա այլ նշան է հասունացման։ Երբ հասունացումը կատարված է, արկած գուրս են քաշում ջրից և խրձերը նորից կոնժամեն շարում ու չորացնում արել տակ։ Դրանից հետո ամբողջ չորացրած ժամանակ պետք է լավ որորել։ Այդ կատարվում է Անտոնովի կամ Սերգեևի մեքենայով, իսկ այդպիսիք ըլինելու գեղությունը պատրաստած առխոտակյա հասարակ գործիքով։ (Նկար 11)։

Միության մի շարք ըրջաններում, նույնպես և ՀՍՍՌ-ի մի քանի ուսումական գյուղերում կտավհատի թրջոցը կատարվում են ցողի միջոցով։ Դրա համար ընտրում են ոչ ճահճոտ, բայց



Նկ. 11

ճմակալած տարածություն, ցողուները վոռում են հավասար ու բարակ շերտով և հաճախակի շուռ տալիս։ Այդ ձեռքի թել սոսանալը երկար ժամանակ է պահանջում և կախված է եղանակի տարրությունից ու ցողից։ Երբեմն այդ պրոցեսը տեսում է 1.5 ամիս։ Այսուել հս պետք է հետեւ հասունացման պրոցեսին, հակառակ դեղոքում թելն ամբողջովին կարող է վատել։

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Կոտավհամարի ցանքի համար որպես նախորդ պետք է ընտրել մոլախոտերից բոլորովին մաքուր այն ցողամասերը, որոնք եղել են բազմամյա խոսաբույսերի, չարքահերկ կուլտուրաների, աշնանացան ցորենի տակ և կամ խոպան են եղել։

2. Վարը պետք է կատարել անսպայման աշնանից, նախադութանիկալոր գութանով, 25—30 սմ. խորությամբ և առանց խարսկերի։

3. Օրոցանական և գժվար լուծելի պարաբանյութերը պետք է հողին տալ աշնանը և վարածածկել ցրտահերկի միջոցով։ Հեշտ լուծվող պարաբանյութերը պետք է տալ զարնանը, կուլտիվացիայից առաջ։ Ամյակային սելիտրայով սնուցելու դեղոքում պետք է տալ նաև կալիումի և ֆոսֆորի աղեր՝ վեղետացիան՝ չձգձգելու և հատիկներում յուղի աղելի բարձր տոկոս ստանալու համար։

4. Մաքսիմալ չափութ պետք է օդտագործել տեղական պա-

բարտանյութերը՝ կառած գոմաղբը, մոխիրը, գիշերային ոսկին,
թոշնաղբը և այլն:

5. Այնաեղ, ուր հնարավոր է, կտավՀատի ցանքերը պետք է
ջրել: Այդ աշխատանքը պետք է կատարել կոկոնակալման—
ծաղկման նախօրյակին միայն: Անջրդի հողերում հողի մշակման
և ցանքերի խնամքի լրիվ աղբոկոմպլեքսի կիրառման միջոցով
պետք է ավելի ուացիոնալ կերպով օգտագործել հողում եղած
ջրի յուրաքանչյուր կաթիլը:

6. Պետք է ցանել նախատես ստուդիած, ախտահանած և
առողջ սերմացու:

7. Ցանքը պետք է կատարել վաղ ժամկետներում, շարքա-
ցան մեքնաներով, 2—2,5 սմ. խորությամբ: Շաղացան կարելի
է թույլ տալ միայն ծայրահեղ դեպքերում:

8. Այնաեղ, ուր հնարավոր է, ցանելուց հետո պետք է կա-
տարել մուլչացում տորֆով: Տորֆը պետք է լինի մանրացրած
և ոչ թթու: Այդ նպատակի համար հեկտարին պետք է վերցնել
30—40 տոնն տորֆ:

9. ԿտավՀատի ցանքերը պարտադիր կերպով պետք է քաղ-
հանել, հենց որ սկսում են երեալ մոլախոտերը: Պետք է հետե-
գել, որպեսզի կոկոնակալման նախօրյակին կտավՀատի դաշտե-
րում ոչ մի մոլախոտ չլինի:

10. Վնասատուներ և հիվանդություններ երևալիս անմիջա-
պես պետք է կիրառել պայցքարի նախատեսված բոլոր միջոցնե-
րը՝ համաձայն հողմոնկոմատի հրահանդների:

11. Պետք է կազմակերպել յուղատու տեղական կտավՀատի
ցողուններից թել ստանալու գործը: Այդ նպատակով այժմյանից
պետք է նախատեսել թրջոցի տեղը և պատրաստել այն բոլոր
դրծիքները, որոնց անհրաժեշտությունը կզգացվի թել պատ-
րաստելու ժամանակ:

Գերջում անհրաժեշտ ենք համարում մի անդամ ևս հետե-
նել մեր կոլխոզնիկներին, որ այս գրքույկում նկարագրված
աղբոճեռնարկումների բնագավառում կատարվելիք աշխատանք-
ները սկրտորեն կարդած են իրար հետ և գրանց մի մասի թե-
րակատարումը կամ սխալ կատարելը բավական է, որպեսզի
մասաց բոլոր աշխատանքները խիստ ցածր էֆեկտ տան:

Ուրեմն հանուն մեր կոլխոզային երշանիկ և ունեվոր կյան-
քի, բուշելիորեն ձեռնամուխ լինենք այդ կուլտուրայի բերքա-
տվության բարձրացման խնդիրներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Կտավհատի նշանակությունը ժողովրդական տնտեսության համար	3
Կտավհատագործության գարզացումը	4
Կտավհատագործությունը Սովետական Հայաստանում	6
Կտավհատի բուսաբանական և տեխնոլոգիական առանձնահատկությունները	8
Կտավհատի մշակման հողականացական պայմանները	11
Հողի մշակումը	14
Հողի նախացանքային մշակությունը	16
Կտավհատի սերմացուի նախապատրաստումը	18
Կտավհատի ցանքը	19
Պարաբացում	22
Կտավհատի հանցանքային մշակությունը	24
Կտավհատի հիվանդությունները և վնասատուները	26
Կտավհատի կաղույսութիւնը	27
Ֆուզարիոզ (թառամոմ)	28
Կտավհատի բերքահավաքը	29
Թելատու կտավհատի զարգացման հեռանկարները Հայաստանում	30
Թելատու կտավհատի ազգութեանիկայի և տեխնոլոգիայի մի քանի առանձնահատկությունները	34
Կտավհատի ցողուններից թել ստանալը	37
Եղրակացություն	40

ՊԱ. ԽՄԲԱԳԻՐ

Գ. ԱԳԱՋԱՆՅՈՒՆ

Վ.Ֆ. 01083. Պատվեր 191. Տիրաժ 1000. Տպագրական $2\frac{3}{4}$ մամուլ. Մեկ
մամուլում 36480 նշան. Հեղինակային 3,1 մամ. Ստորագրված է
տպագրության 31/III 43 թ.

Հայպետբատի տպարան Երևան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008689

ՏԵՂԵ 1 Ա. 95 6.

A 18526